

էր աջ ձեռքով ուղիղ մէջտեղից բռնած և բարձրացնում մինչև ականջը: Տէգը փայտից էր լինում՝ երկաթեայ ծայրով, բայց գիմնապիւններում գործադրածը, կարծեմ, երկաթեայ ծայր չունէր:

Թարգմ. Մարկոս Բահ. Տէր-Մկրտչեանց.

(Կը շարունակուի)



ՄԱՏԵՆԱԽՅՍՈՒԹԻՒՆ

Александръ Анискинъ. Исторія армянской церкви (до XIX вѣка). Кішиневъ 1900, стр. XI+306+VI, 8^о, цѣна 2 руб.

Իւրաքանչիւր պատմական երկ քննելիս հարկաւոր է ամենից առաջ ուշադրութեան առնել փաստերի վաւերական լինելը և ճշտութիւնը և ուսումնասիրութեան եղանակը՝ մեթոդը: XIX-րդ դարի գիտական և քննական ոգին պատմական հետազոտութիւնների մէջ նրանով արտայայտուեց, որ սկսեցին հին աւանդական պատմագրական հոսմ նիւթը՝ պատմական աղբիւրները՝ մանրակրկիտ կերպով քննել՝ աշխատելով դաել ուղիղը սխալից, զրոյցը և առասպելը պատմական իրողութիւնից և հին պատմագիրների ազէտ, կողմնապահ կամ միտումաւոր դատողութիւնները անաչառ, առարկայական (objektiv, объективный) վերաբերմունքից դէպի պատմական անցքերը: Այսպիսով նաև նորագոյն հայադէտ մասնագէտները՝ նոյն քննական ոգուն և ուղղութեանը ենթարկուելով՝ իրանց բազմաթիւ ուսումնասիրութիւններով աշխատել են և աշխատում են դաել մաքրել և ճշտել հայոց անցեալի աւանդական առատ նիւթը, որպէս զի հետ-

լուստր լինի՝ ուղիղ փաստերի վրայ յենուելով՝ շունչ տալ անկենդան պատմագրական փաստերի կոյտերին, և պատմական նորագոյն մեթոդների համաձայն՝ կարելի լինի որոշ գիտական սխառմով մշակուած և ձշտուած փաստերի և աղբիւրների օգնութեամբ ամփոփել և նկարագրել հայ ժողովրդի քաղաքական կամ եկեղեցական պատմութիւնը:

Թէ ուսումնասիրութեան եղանակի և թէ պատմագրական նիւթի և փաստերի ձշտութեան տեսակէտից՝ պր. Ա. Աննինսկու «Հայոց եկեղեցու պատմութեան» մէջ բացակայում է բանասիրական և պատմագիտական նորագոյն քննական և արդարամիտ ոգին և ուղղութիւնը: Այս աշխատութիւնը մոլեռանդ երկաթնակի միտումաւոր ուղղութեամբ կազմուած և մեծ մասամբ՝ սխալ ու թերի պատմագրական փաստերի վրայ հիմնուած մի երկ է, և մի ապացոյց է, որ ատաւիզմը գոյութիւն ունի նաև գիտական գրականութեան մէջ, որովհետև միջնադարեան նեղսիրտ, անարդար և մոլեռանդ ոգին և կրօնական անհանդուրժականութիւնը ցոյց եւ տալիս իրանց բնորոշ հնադարեան դէմքը սև տառերի և տողերի միջից, յիշեցնելով, որ իրանք դեռ գոյութիւն ունեն որոշ իբր գիտական երկերում:

Գծբախտութիւնն այն է, որ բազմաթիւ անտեղեակ ընթերցողներ, որոնք Հայոց եկեղեցական պատմութեան վերաբերեալ նորագոյն աշխատութիւններին և պատմական ստոյգ յիշատակագրերին անծանօթ են՝ կարող են մոլորուել և ընդունել Աննինսկու աղաւաղուած միտումաւոր լուսաբանութիւնները իբրև իրական պատկեր Հայաստանեայց եկեղեցու անցեալի: Բարեբախտաբար՝ հնարաւորութիւն ունենք մատնացոյց անելու այս գրքի առաջաբանի վրայ, ուր հեղինակն ինքը որոշում է իւր պատմական մեթոդը. այնպէս որ նոյն իսկ անփորձ ընթերցողը հեղինակի խօսքերից գաղափար կը կազմէ այս ուսումնասիրութեան էական թերութեան մասին: Գրքի առաջաբանում էջ VII տող 24-29 պր. Ա. Աննինսկի պարզապէս շեշտում է, որ «Նրա նպատակն է եղել ըստ կարելոյն հաւաքել հայկական և ուրիշ աղբիւրներից հայոց եկեղեցական պատմութեան վերաբերեալ ոչ-հայի համար բոլոր

մատչելի տեղեկութիւնները և տալ հաւաքած փաստերին իւր կարողութեան չափ լուսաբանութիւն և մեկնութիւն, ղեկավարուելով «*պատկառելի հետազոտողի*» խստիւ անաչառութեամբ: Իւր այս սկզբունքին հեղինակը հաւատարիմ է մնացել և որովհետեւ ուղղափառ հետազոտողի աչքում Հայ լուսաւորչականները, Քաղկեդոնի ժողովից բաժանուելուց յետոյ՝ հերետիկոսներ և աղանդաւորներ են դառնում՝ այդ պատճառով էլ բոլոր բարձրագոյն հայ հոգևորականները և ընդհանրապէս ամբողջ Հայաստանեայց եկեղեցին վատաբանուած և սև գոյներով է նկարագրուած. մանաւանդ պատմական այն շրջաններում՝ երբ Հայաստանեայց եկեղեցին համարձակ կերպով դիմադրում և հակառակում է բիւզանդական եկեղեցուն, ունենալով իւր սեպհական կարծիքը միաբնակութեան և երկաբնակութեան խնդիրների մասին: Հայ հոգևորականների ինքնուրոյն անկախ համոզմունքներն աստուածաբանական դաւանական որոշ հարցերում շարունակ անհանգստացնում և վրդովեցնում են այս գրքի «*անպաւն*» պատմաբանին, և պր. Անինսկի զայրացած բացականչում է. «Հայ ժողովրդի մեծամասնութիւնը, աստուածաբանութեան նրբութիւնները չհասկանալով՝ կուրորէն պաշտպանում էր իւր պապերի հաւատը (էջ 137)»: Իսկ դուք պր. Անինսկի մի՞թէ կոյր չէք, որ a priori Ձեր դաւանական հասկացողութիւններն անհերքելի նուրբ ճշմարտութիւններ համարելով՝ ամեն մի ձեզանից տարբեր կերպ մտածող անհատ համարում էք «կոյր», «փանատիկոս», «հերետիկոս», «ազէտ», «ամբարտաւան», «բամբասող», «խաւարափո» և այլն: Ձեր աչքում Յովհան Օճնեցին «փանատիկոս է», որ մտածում է հերետիկոսի նման, «Ստեփանոս Սիւնեցին, թէպէտ Հայոց եկեղեցում համարւում է սուրբ, սակայն ծայրայեղ միաբնակ է», իսկ Գրիգոր Նարեկացին՝ որովհետեւ ձեր կարծիքով Յոյների կողմնակից էր (?), ուստի և նրա սրբութիւնն ակնյայտնի է: Իսկ եթէ վաղը ձեզ ապացուցանեն, որ Գրիգոր Նարեկացին ևս հաւատարիմ է եղել Հայաստանեայց եկեղեցու դաւանական սկզբունքներին՝ իհարկէ դուք նրան ևս կը տեղափոխէք ձախ կողմը՝ համարելով նրան «կոյր», «փանատիկոս», «հերետի-

կոս», «կեղծաւոր» և այլն: Եթէ պր. Աննինսկի Հայ հոգեւորականների և Հայաստանեայց եկեղեցու թերութիւնները և պակասութիւնները մատնանիշ անէր՝ պատմագրական վաւերական և ստոյգ փաստերի վրայ յիշուելով և յարգելով մեր ազգային եկեղեցու դաւանական ինքնուրոյն հասկացողութիւնները՝ ինչպէս այդ վայել է մի իսկապէս անաչառ պատմաբանի՝ իհարկէ նրա արդարամիտ յարձակումները կրնգունելինք և կըհամաձայնէինք նրա հետ. սակայն խղճի ազատութեան և ուրիշի համոզմունքները յարգելու նուրբ դադախարներն օտար լինելով այս հեղինակին՝ նա Հայ հոգեւորականներին մեծ մասամբ վատարանում է միմիայն այն պատճառով, որ նոքա ստուածաբանական խնդիրների միմասը չեն հասկանում և ըմբռնում այնպէս, ինչպէս ինքը:

Գրքի առաջարանում յիշուած աղբիւրներից երեւում է, որ այս հեղինակը միանգամայն անծանօթ է Հայոց եկեղեցու պատմութեան վերաբերեալ բազմաթիւ մասնագիտական հետազոտութիւններին, որոնք գրուած են հայերէն կամ գերմաներէն: Այդ լեզուները պր. Աննինսկի երևի չգիտէ, ուստի և Գուշմիտի, Ֆետտերի, Գեյցերի, Տաշկանի և ուրիշ հայ կամ գերմանացի մասնագէտների նորագոյն աշխատութիւններից չէ կարողացել օգտուել: Պր. Աննինսկու գլխաւոր աղբիւրներն են երկու կամ կէս դար առաջ գրուած Կլիմէս Գալանտսի և Հ. Չամչեանի յայտնի աշխատութիւնները, Ֆրանսերէնի կամ ռուսերէնի թարգմանուած հայ մատենագիրները և բիւզանդական պատմագիրների և ժամանակագիրների մի քանի տեղեկութիւնները: Հայաստանեայց եկեղեցու մասին:

Իւրաքանչիւր պատմաբանից կարելի է և պէտք է պահանջել, որ նա բանասիրական նախապատրաստական աշխատութիւններից օգտուած լինի: Հայագիտութեան և Հայոց եկեղեցական պատմութեան վերաբերեալ ամեն մի մասնագիտական ուսումնասիրութիւն մի քար է՝ պատմական ամփոփման մեծ շէնքի համար պատրաստուած: Պր. Աննինսկի չէ օգտուել եղած նախապատրաստական աշխատութիւններից և այդ պատճառով՝ նրա գրուածքում սովորական են.

սխալ լուսարանութիւններ մեր եկեղեցու պատմական այն-
պիսի երեւոյթներն որոնք այս կամ այն մասնագիտական
երկում կամ յօդուածում ստուգուած և ճշտուած են։
Այս աշխատութեան բոլոր պատմագրական սխալները կամ
հեղինակի անարգար, կամայական լուսարանութիւնները մատ-
նանիշ անելու և քննելու համար՝ հարկաւոր կրկինէր մի
ամբողջ գիրք գրել։ Մեր համառօտ մատենախօսականում
կրբաւականանալք միմիայն առաջի էջերի քննութիւնով։
Ամեն մի մասնագէտ, պր. Աննինսկիւ գրքին ծանօթանալով՝
անձամբ կրկարողանայ ստուգել, որ գրքի շարունակութեան
մէջ համարեա ամեն մի էջում նոյն թերութիւնները կրկի-
նուում են։

Իւր աշխատասիրութեան հենց առաջի էջում պր. Ա.
Աննինսկի Հայոց պատմութեան ընդհանրացումների ընդհան-
րացումն է անում։ Հայ ազգի պատմական դերը և նշանա-
կութիւնը որոշելով։ «Անկասկած» գրում է նա, «Հայերը
հին ժողովուրդ են։ Սակայն դասելով այն բանի հիման
վրայ, որ ոչ մի նկատելի հետք չէ մնացել, որը ցոյց տար հին
Հայոց քաղաքական զօրութիւնը կամ նոցա կուլտուրական
նշանակութիւնը՝ պէտք է կարծել, որ Հայերը չեն ունեցել
ոչ այն և ոչ միւսը։ Ըստ երեւոյթին Հայ ազգը եղել է միշտ
մի կիսափայրենի ցեղ»։ Արդեօք յարգելի հեղինակը արամա-
զիւր չէ՞ Հայ ազգը համեմատելու Հռոմէոսների կամ Քուր-
դերի հետ։ Իրաւ որ Հայաստանը մի մեծ քաղաքական ոյժ
չէ եղել, սակայն ո՞ր բարեխիղճ և արդարամիտ մասնագէտ
ընդունակ կրկինի ուրանալու այն ակնյայտի իրողութիւնը,
որ մեր նախնիքներն իրանց ժամանակուայ քրիստոնէական
կուլտուրան թէ իւրացրել և թէ տարածել են հիւսիսային
ցեղերի և ընդհանրապէս Հայաստանի սահմանակից մանր
ազգութիւնների շրջաններում։ Այն դատողութիւնը, թէ Հայ
ազգը կիսափայրենի մի ցեղ է եղել՝ չափազանց տարօրինակ է
մանաւանդ այնպիսի մի պատմաբանի բերանում, որը հին
Հայոց հարուստ մատենագրութեան բեկորների և փշրանքնե-
րի վրայ յենուելով՝ Հայաստանեայց եկեղեցու պատմութիւնն
է գրում։ Չէ՞ որ այդ գրականութիւնը քրիստոնէական որոշ

կրթութեան և կուլտուրայի արդասիք է: Պր. Աննինսկու բանասիրական անբարեխղճութիւնը և կամայականութիւնն այնքան մեծ է, որ վերոյիշեալ անարդար դատողութիւնից մի քանի տող ներքեւ անգիտակցաբար ինքը իւր ասածը ջրում է՝ Հայերի ամենահնագոյն պատմութեան մասին մի խիստ նպաստաւոր, բայց սխալ կարծիք յայտնելով:

«Ասորեստանի բեեռագիր արձանագրութիւններում», ասում է պր. Աննինսկի, «Սալմանասար Գ.-ի ժամանակից սկսեալ Հայերը յայտնի են ուրարտի (урартի?) անունով»: Այստեղ հմուտ պատմաբանը շփոթում է նախ այն, որ Ուրարտուն երկրի անուն է և ոչ թէ ազգի. իսկ երկրորդ՝ եթէ հեղինակը Հայերին Ուրարտու երկրի ազգն է համարում՝ ապա ուրեմն Հայերը իրանց պատմութեան ամենահին շրջանում՝ Ասորեստանի և Բաբելոնի նման՝ նշանաւոր հին քաղաքակրթութիւն են ունեցել և պետական հզօր կազմակերպութիւն:

Նոյն առաջին էջում հին Հայոց հեթանոսական կրօնը նկարագրելու համար՝ պր. Աննինսկի յիշում է իբրեւ աղբիւր միմիայն Մովսէս Խորենացուն: Այն ինչ Հայոց հեթանոսական կրօնի ուսումնասիրութեան համար գլխաւոր աղբիւրն է Ագաթանգեղոս. կարեւոր են նաեւ մի քանի տեղեկութիւններ Անանիա Շիրակացու երկերում: Ի. Gelzer-ի «Zur armenischen Götterlehre» (Berichte des Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften, 1895) և Հ. Ղեւոնդ Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (Վեներական, 1895) ընդարձակ աշխատութիւնները նոյնպէս հեղինակին անծանօթ կամ անմատչելի են եղել: Սակայն պր. Աննինսկի ամենայն համարձակութեամբ՝ միմիայն Մովսէս Խորենացու և Ստրաբոնի վրայ հիմնուելով՝ թերի կամ սխալ տեղեկութիւններ է հաղորդում Հայոց հեթանոսական կրօնի մասին՝ ընդամենը՝ մի քանի տասնեակ տող, և գիտական աներեւակայելի թեթեամտութեամբ եղբակացնում է, որ հեթանոսական շրջանում Հայերը անտարբեր են եղել դէպի իրանց կրօնը: «Փողովուրդը», նրա ասելով՝ «այդ շրջանում քիչ էր հետաքրքրւում հին և նոր աստուածներով, այլ իւր

անտիապաշտութիւնների և նախապաշարումների մէջ էր ապրում: Մարդ ուղղակի զարմանում է այն տաղանդի և սրամտութեան վրայ, որոնց օղնութեամբ այս պատմաբանը, Հայոց հեթանոսական կրօնի մասին միմիայն մի քանի կիսատ տեղեկութիւնների ծանօթ լինելով՝ կարողանում է իրանից 16 դար առաջ ապրող հեթանոս Հայ ժողովրդի կրօնական զգացմունքի աստիճանը որոշել:

Այս ամենագէտ պատմաբանը, որ բանասիրական և պատմական ամեն մի մութ և կնճռոտ խնդրի համար պատրաստի երևակայական պատասխաններ ունի՝ Հայոց հեթանոսական շրջանի կրօնի մասին մի ուրիշ նոր տեղեկութիւն էլ է հաղորդում, իբր թէ Հայերը այդ շրջանում իրանց կրօնական հաւատալիքների շարքում ոչ մի ինքնուրոյն բան չեն ունեցել և չեն ստեղծել: Այս տեսակ կամայական և անբարեխիղճ ընդհանրացումների թերութիւնները ցոյց տալը նոյն իսկ աւելորդ է:

Հայոց հեթանոսական կրօնը համառօտ կերպով նկարագրելուց յետոյ՝ պր. Աննինսկի խօսում է Թագէոս, Թագէոս Աերբէոս, Բարդողիմէոս և Թոմայ առաքեալների մասին, որոնք ըստ Հայոց աւանդութեան Հայաստանում քարոզել և քրիստոնէութիւն են տարածել: Հայ պատմագիրների հակասական և առասպելախառն տեղեկութիւններն առաքեալների քարոզչութեան մասին Հայաստանում՝ հեղինակը անփստահելի է համարում: Այդ կէտում բոլորովին իրաւացի է: Սակայն պր. Աննինսկի պարտաւոր էր հաստատուն փաստերով ապացուցանել, թէ ինչո՞ւ Հայ պատմագիրների վկայութիւններն այդ մասին մեծ մասամբ արժանահաւատ չեն: Բանասիրութեան մէջ այդ խնդիրը բաւական լուսաբանուած է մանաւանդ A. Carrière-ի, La légende d' Abgar dans l'histoire d' Arménie de Moïse de Khoren (Paris, 1895) և H. Gelzer-ի, Geschichte der armenischen Kirche (տե՛ս՝ Realencyklopädie für protestantische Theologie und Kirche, 3 Aufl., 1896, Bd. II) գրուածքներում: Սակայն, ինչպէս ասացինք, պր. Աննինսկի նորագոյն բանասիրական աշխատութիւններից համարեա ամենեւին չէ օգտուել: Առաջի դարե-

բռնում՝ քրիստոնէութեան մուտք գործելը Հայաստանում հեղինակը խիստ հաւանական է համարում, թէպէտ Գ. դարում յայտնի Մերութեան հայ եպիսկոպոսին ամենեւին չէ յիշում: Բայց մի քանի տող յետոյ (որպիսի բանասիրական սրատեսութիւն) նոյն այս պատմաբանը անկասկած է համարում որ Գ. դարում ամբողջ Հայաստանում ոչ մի քրիստոնէական համայնք և ոչ մի եպիսկոպոս չեն եղել (էջ 5):

Պր. Աննինսկիւ այս աշխատութեան մասին ընթերցողներին մի որոշ գաղափար տալու համար՝ մեր մատենախօսականում միմիայն մատնանիշ արինք առաջի պատահած մի քանի խոշոր սխալները սկզբի մի քանի էջերում: Պատմագրական երկորդական անճշտութիւնների, պատմական անցքերի երեւակայական թուականների, հայ անունների սխալ առաւարձութիւններ անթիւ անհամար են սոյն երկում: Միւս կողմից՝ հեղինակի պատմական ուսումնասիրութեան եղանակը՝ մեթոդը՝ ոչ գիտական է, ոչ էլ անաչառ: Որովհետեւ Հայաստանեայց եկեղեցին բաժանուել է Բիւզանդականից և դէմ է Քաղկեդոնի ժողովին և երկաթնակութեան՝ ուրեմն և այդ եկեղեցին իւր պատմական անցեալում եղել է «հերետիկոս», «փանատիկոս», «տգէտ», «ամբարտաւան» և այլն: Ահա այս է պր. Աննինսկիւ պատմական անաչառութիւնը: Պր. Աննինսկիւ անարդար ամբաստանութիւնները և հայհոյանքները մեր եկեղեցու դէմ՝ ոչ մի վրդովմունք և անհանգստութիւն չեն կարող պատճառել Հայաստանեայց եկեղեցու բազմաաւանջ համայնքին, որովհետեւ գիտական արդարամտութիւնը և ճշմարտասիրութիւնը խղճի ազատութեան և կրօնական հանգուրժականութեան լուսաւոր լայն սկզբունքները յաղթել են և կը յաղթեն պր. Աննինսկիւների այն խաւար սկրզբունքները և հասկացողութիւնները, որոնք խոչնդոս են անաչառութեան և գիտական արդարամտութեան: C'est une grande folie de vouloir être sage tout seul—մեծ անմտութիւն է, երբ մարդ կարծում է թէ միայն ինքն է իմաստուն: